«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

--------- ---------- 2021 թվականի N - Ն

Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի n 534-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշումը լրացնել նոր՝ 24-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«24) Գործազուրկ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 24 հավելվածի։».

2) որոշումը լրացնել նոր՝ N 24 հավելվածով՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հավելված

ՀՀ կառավարության 2021 թվականի

_____ ___-ի N ____ -Ն որոշման

«Հավելված N 24

ՀՀ կառավարության 2014 թվականի

ապրիլի 17-ի N 534-Ն որոշման

ԿԱՐԳ

ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն)միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) տարածքային կենտրոններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) հաշվառված գործազուրկ անձանց աշխատանքի ընդունած գործատուին՝ պետական աջակցության տրամադրման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:
2. Ծրագրի նպատակն է աջակցել գործազուրկ անձանց աշխատանքի ընդունած գործատուին՝ այդ անձանց աշխատավարձից հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափով աջակցություն տրամադրելու միջոցով:
3. Տվյալ տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրի մասին տեղեկատվությունն արտացոլվում է ծառայության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական համակարգում, իսկ տարածքային կենտրոնը տեղեկատվությունը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ տեսանելի տեղում, ինչպես նաև տարածում զանգվածային լրատվության միջոցների և հնարավոր այլ իրազեկման աղբյուրների միջոցով:
4. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.
- օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

1. **ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**
2. Ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է ավելի վաղ գործազուրկի կարգավիճակ ստացածին:
3. Հաշմանդամություն ունեցող գործազուրկ անձանց համար ծրագիրն իրականացվում է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագիրը:
4. Ծրագրի շրջանակներում աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր գործազուրկի համար գործատուին տրամադրվում է աջակցություն՝ այդ անձանց աշխատավարձից հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափով, եռամսյակային կտրվածքով՝ առավելագույնը 100 000 դրամի չափով: Գործատուին աջակցությունը տրամադրվում է առավելագույնը մեկ տարի ժամկետով:
5. Տարածքային կենտրոնը տվյալ տարվա ոչ ուշ, քան հունվարի տասներորդ աշխատանքային օրը և յուրաքանչյուր հաջորդ

եռամսյակին նախորդող ամսվա վերջին հինգ աշխատանքային օրվա ընթացքում բոլոր համագործակցող գործատուներին էլեկտրոնային փոստի և առցանց կապի այլ միջոցներով ուղարկում է ամփոփ տեղեկատվություն ծրագրի պայմանների մասին:

6. Գործատուն էլեկտրոնային եղանակով, փոստային ծառայության միջոցով կամ անձամբ տարածքային կենտրոն է ներկայացնում ծրագրի մասնակցության հայտ՝ նշելով իր հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկությունները (հասցեն, հեռախոսահամարը, այդ թվում՝ բջջային, էլեկտրոնային փոստի հասցեն)՝ միաժամանակ կցելով իր մոտ առկա թափուր աշխատատեղի մասին հայտը:
7. Տարածքային կենտրոնը գործատուի մասնակցության մասին հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն մուտքագրում է տեղեկատվական համակարգ և դրա մասին տեղեկացնում ծառայությանը:
8. Ծառայությունը գործատուի հայտով ներկայացված թափուր աշխատատեղը ծրագրի աջակցությամբ համալրելու համար մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով կատարում է ծրագրում ընդգրկման ենթակա անձանց ընտրություն՝ հիմք ընդունելով սույն կարգի 5-րդ կետը, և ձևավորում է ծրագրում ընդգրկման ենթակա անձանց ցուցակը (այսուհետ՝ ցուցակ) և ուղարկում համապատասխան տարածքային կենտրոններ:
9. Տարածքային կենտրոնը ցուցակում ընդգրկված անձին տրամադրում է ծրագրի վերաբերյալ խորհրդատվություն:
10. Տարածքային կենտրոնը ցուցակում ընդգրկված անձանց ուղեգրում է ծրագրում ընդգրկվելու համար հայտ ներկայացրած գործատուի մոտ կամ գործատուի էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում հաղորդագրություն՝ նշելով ցուցակում ընդգրկված անձանց մասին տեղեկատվությունը, ուղեգրման ենթակա անձանց թիվը:
11. Տարածքային կենտրոնը, գործատուի հետ համաձայնեցնելով ուղեգրման ենթակա անձանց թիվը, օրն ու ժամը, գործատուի մոտ է ուղեգրում գործազուրկ անձանց՝ ըստ ցուցակում նշված հերթականության:
12. Գործատուի մասնակցության հայտը չեղարկվում է՝

- գործատուի պահանջով կամ
- եթե նրա մոտ առկա թափուր աշխատատեղը համալրվում է գործազուրկ ի կողմից կամ
- եթե գործատուն հրաժարվում է աշխատանքի ընդունել ցուցակում ընդգրկված անձին (անձանց):

16. Տարածքային կենտրոնի կողմից գործատուի մոտ ուղեգրված անձին առնվազն մեկ տարի, իսկ սեզոնային աշխատանքի դեպքում առնվազն 12 ամիս ժամկետով աշխատանքի ընդունելու դեպքում գործատուի, տարածքային կենտրոնի և գործազուրկի միջև կնքվում է գործատուին աջակցության տրամադրման մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ երեք օրինակից, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի (այսուհետ՝ նախարար) հաստատած օրինակելի ձևին համապատասխան:
17. Պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գործատուն գործազուրկի հետ կնքում է աշխատանքային

պայմանագիր՝ առնվազն մեկ տարի ժամկետով:

18. Գործազուրկի հետ աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո գործատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային պայմանագրի պատճենը ներկայացնում է տարածքային կենտրոն կամ ուղարկում էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը:
19. Գործազուրկին սեզոնային աշխատանքի ընդունելու դեպքում աշխատանքային պայմանագիրը կնքվում է յուրաքանչյուր տարի առնվազն վեց ամիս ժամկետով՝ գումարային առնվազն ապահովելով գործազուրկի 12 ամսվա զբաղվածությունը:
20. Տարածքային կենտրոնը ծրագրի վերաբերյալ համապատասխան առաջարկի, գործազուրկի կողմից առաջարկի ընդունման կամ չընդունման, ինչպես նաև գործատուի կողմից գործազուրկին աշխատանքի չընդունելու վերաբերյալ նշումներ է կատարում անձի զբաղվածության ապահովման անհատական ծրագրում՝ դրան կցելով ուղեգիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի միջոցով ստացված համապատասխան հաղորդագրությունը:
21. Սույն կարգի 18-րդ կետում նշված աշխատանքային պայմանագրի պատճենը կամ էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տարածքային կենտրոնն էլեկտրոնային եղանակով ծառայություն է ուղարկում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագիրը՝ նախարարի հաստատած ձևին համապատասխան:
22. Ծառայությունը ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը տարածքային կենտրոններից ստանալուց հետո կազմում և նախարարություն է ներկայացնում նախարարի հաստատած ձևին համապատասխան և ըստ տարածքային կենտրոնների ամփոփված ծրագրի ֆինանսավորման մասին հայտ-պահանջագիրը՝ ոչ ուշ, քան դրանք ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:
23. Նախարարությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծառայության կողմից ներկայացված հայտ-պահանջագիրը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ ծառայության անվամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում բացված հաշվի համարին ֆինանսական միջոցների փոխանցման նպատակով:
24. Ծառայությունը մինչև տվյալ տարվա հունվարի երրորդ աշխատանքային օրը նախարարություն է ներկայացնում ծրագրի ծախսերի նախահաշիվը:
25. Նախարարությունը ծառայությունից ծախսերի նախահաշիվն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում և տրամադրում է ծառայությանը:
26. Ծառայությունը նախարարությունից հաստատված ծախսերի նախահաշիվն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Քլայնթ Թրեժրի» («Client Treasury») էլեկտրոնային ծրագրային համակարգում:
27. Ծառայությունն իր անվամբ բացված հաշվի համարին գումարն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում այն սահմանված կարգով փոխանցում է գործատուի բանկային հաշվի

համարին։

28. Գործատուին աջակցության տրամադրումը դադարեցվում է, եթե լուծվում է սույն կարգի 17-րդ կետում նշված աշխատանքային պայմանագիրը։
29. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով։»։